

Ա. ԽԱՆԶՅԱՆ

ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

891.99.09

ԽՍ-26

ԵՏՀՐԱՏ

1934

89/09/09 6384-36

m-261

MS group/album

MS/165

DC-16362 29/1/84



0 MAY 2018

13 APR 2018



6387-56



831.89.08

М-26

Ա. ԽԱՆԶՅԱՆ

ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(ՅԵԼՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ)

1589

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1984



Պետերատի տպարան, Գլավիտ Ա—8666,
հրատ 3099, պատվեր 1237, տիրաժ 3000
Համեմված է արտադրության 5/VIII 34 Բ.
Ստորագրված է տպագրելու 5/VIII 34 Բ.



Ընկերներ! Խորհրդային դրականու
թյունը, նրա բաղկացուցիչ մեկ մա-
սը՝ հայկական խորհրդային դրակա-
նությունը ապրում են վերելքի չըր-
ջան: Գրականության ներկա մեծ վե-
րելքը Խորհրդային Միության մեջ,
ինչպես նաև կուլտուրական շինարա-
րության և արվեստի այլ ճյուղերի
աննախընթաց աճումն ու ծավալումը
հիմք ունեն մեր յերկրի, Խորհրդային
մեծ հայրենիքի, հաստատուն և բար
գալաճ դրությունը, տնտեսական վե
րելքը, սոցիալիզմի կառուցման հզոր
առաջընթացը: Մեր հայրենիքը, Խոր
հրդային Միությունը հասել է ար-
դեն տնտեսական և կուլտուրական
զարգացման անհասանելի բարձրունք

ների: Ազատադրված Փետդալիզմի մնացորդներէց, կապիտալիստական հասարակարդի, մասնավոր սեփականութեան կապանքներէց, պատմութեան մեջ նախընթաց չունեցող արաւուսթամբ աճում են մեր յերկրի արտադրողական ուժերը: Հաղթահարելով հսկայական դժվարութեաներ, բանվոր դասակարգը, կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ, ստեղծեց խորհրդային Միութեան տնտեսական վերելքի, վողջ տնտեսութեան վերակառուցման, յերկրի իրական անկախութեան և սրաշտպանութեան հզորագույն լրծակը, ամբողջ աշխարհում առաջնակարգ մեր սոցիալիստական արդյունարեքութեանը: Հաջորդութեամբ վճռելով սոցիալիստական հեղափո-

խութեան դժվարագույն պրոբլեմը, մանր գլուղացիական բաղմամբիւրոն տնտեսութեաններէ միացման ու վերակառուցման գործը, բանվոր դասակարգը ստեղծեց և ամրացրեց մեր յերկրում աշխարհի աւելնախոշոր դյուղատնտեսութեանը: Խորհրդային Միութեան բաղմալեզու և բաղմազգի ժողովուրդները մի յեղբայրական ընտանիք կազմած կոչում են իրենց յերջանիկ ներկան և ել ավելի յերջանիկ ապագան: Խորհրդային Միութեան բոլոր ժողովուրդներէ, նախկին ցարական բանտի նախկին այդ ստրուկներէ աշտրվա կուլտուրան, ձեռով աղգային, բովանդակութեամբ սոցիալիստական, աճում ու ծավալվում ե այնպիսի թափով և խորութեամբ, ինչպես կարող ե աճել մի-

միայն խորհրդային իշխանության
պայմաններում: Մեր յերկիրը այսօր
ամենայն բանիկ, ավելի ճիշտ միակ
յերջանիկ յերկիրն է յերկրագնդի
վրա: Նա ընդմիջտ ազատված է կա-
պիտալիստական դաժան կարգերից,
նա ընդմիջտ վերացրել է այն պայ-
մանները, վորոնք առաջ են բերում
մարդու շահագործումը՝ մարդու մի-
ջոցով: Նա կրում է մեր ժամանակ-
ների ամենահեղափոխական, ամենա-
պրոգրեսիվ աշխարհահայացքը՝ լե-
նինիզմը: Նրա գլուխը կանգնած է
մեր անպարտելի կոմունիստական
կուսակցությունը, մեր իմաստուն,
հանճարեղ առաջնորդ ընկ. Ստալինը
(բուռն ծափեր): Նրա աշխատավոր
ժողովուրդները միասնական բանակի
կազմակերպված ջոկատների նման

այսօր հնձում են առաջին, հերոսա-
կան հնգամյակի առատ բերքը, հա-
մառ աշխատանքով վճռում են 2-րդ
հնգամյակի վիթխարի խնդիրները,
վճռում են վոչ միայն տնտեսությու-
նից, այլ նաև մարդկանց գիտակցու-
թյունից կապիտալիզմի հետքերը և
մնացորդները վերացնելու պատմա-
կան խնդիրը: Յեվ մենք տեսնում ու
չոչափում ենք, թե ինչպես սոցիա-
լիզմի կառուցման մարտերում, ամե-
նորյա պայքարի ընթացքում, գոր-
ծարաններում և սոցիալիստական
դպրոցում, կարմիր բանակում և
դպրոցում, պիոներական ճամբարում
և խորհրդային տնտեսության մեջ
ոտեղծվում է նոր մարդու տիպը, սո-
ցիալիզմի շրջանի մարդու տիպը, վոր
ազատվում է կապիտալիստական

Հասարակակարգի մարդու ժառանգական արատներից, վոր Փիղիկական և հոգևոր աճման անսահմանափակ հնարավորութիւն ունի, վոր պայծառ գիտակցութեամբ տեսնում ե իր այսորվա և վաղվա ուրը:

Ահա ընկերներ, ինչ նպաստավոր պայմաններում ե, վոր ընթանում ե խորհրդային դրականութեան վերելքը: Պատահական չե, վոր ներկա դրութեամբ, յուր ծավալով, յուր բարձր զարգացած արականութեամբ նա ամենաառաջնակարգ դրականութիւնն ե ամբողջ աշխարհում: Իսկ ի՞նչ դրութեան մեջ ե գրականութիւնը կարմիր գծից դուրս, այն յերկրներում, վորոնք ունեն կուլտուրական զարգացման, կուլտուրական արժեքների կուտակման դարավոր պատ-

մութիւն: Ով չգիտե հիմա, վոր անհիմն եր Հայնրիխ Հայնեյի վախը, թե հաղթական պրոլետարիատը պիտի փչրի գեղեցկութեան աստվածների արձանները և Հայնեյի բանաստեղծութիւնների թերթերն ողտադործի փաթեթ պատրաստելու համար: Ֆաշիստական մայրաքաղաքների հրապարակներն են, վոր այսոր շառագունում են այն խարույկների բոցերից, վորոնց հրի ճարակ են դառնում մարդկութեան մեծագույն տաղանդների, հենց նույն Հայնեյի անմահ գործերը: Բուրժուական դրականութիւնը դառնում ե ծայրաստիճանի անկման մեջ. այսոր նա արտահայտում ե և կարող ե արտահայտել միմիայն լքման և հուսահատութեան տրամադրութիւններ,

բութութեան աշխարհի անել դրութեանը, քայքայումը, փտումը: Ինչպես վոր խորհրդային դրականութեանը հայելին ե մեր մեծ առօրյայի, այնպես ել բութութեան դրականութեանը արտացոլում ե կապիտալիզմի մայրամուտը, նրա որհառի սարսափելի ջղաձգութեանները: Յեւ պատահական յերևույթ չե, վոր հին կուլտուրայի լավագույն, ամենաանգնիւկ ե ամենախոշոր ներկայացուցիչները, հիշենք թեկուզ միայն Ռոմեն Ռոլլանին, անվերապահօրեն անցնում են մեր դրոշակի տակ, յերբ բութութեան յերկրների բազմաթիւ ե լավագույն գրողները ե կուլտուրական գործիչները ավելի ե ավելի յեն մոտենում մեզ, մեր յերկրի մեջ են տեսնում մարդկութեան հուսն ու ապագան:

Ընկերներ! Հայկական խորհրդային դրականութեանն ես ապրում ե վերելքի շրջան, վորն իր հերթին նույնպես արդեւոյնք ե մեր յերկրի, Խորհրդային Հայաստանի տնտեսական ու կուլտուրական մեծ վերելքի: Այդ յերևում ե բազմաթիւ ցուցանիշներէ: Մեր ժողովրդի թվի համեմատութեամբ սովար ե ե սովարանում ե մեր դրական բանակը: Մեզ հետ են, խորհրդային Հայ դրականութեան բանակումն են նախախորհրդային շրջանի ավազ սերնդի ամենահայտնի գրողները՝ Շիրվանդդեն, հանգուցյալ Նար-Դոսը, Ավ. Իսահակյանը, [redacted] Խորհրդային շրջանումն ե, վոր ձեւակերպվեցին վոր-

պես աչքի ընկնող գրողներ՝ Դեմիրճյանը, Զորյանը, Թովթովենցը, Արազին, Լեռ Կամսարը: Խորհրդային շրջանի ծնունդն են մեր այսօրվա գրականության վողնաշարը կազմող՝ Զարենցը, հետհոկտեմբերյան խոշորագույն մեր պոետը, Բակունցը, Վչտունին, Ալադանը, Մահարին, Արմենը, Զորյանը, Սարյանը, Նուրենցը և այլն: Այս գալիս ե գրական նոր սերունդը, յերիտասարդ, սկսնակ գրողներ, վորոնցից խոշոր սպասելիք ունենք, յեթե միայն ներանք լրջորեն աշխատեն: Սա, ընկերներ, քիչ բան չե մանավանդ յերբ համեմատում ենք մեր այսօրվա գրականության դրությունը նախախորհրդային գրականության հետ: Վոչ այլ վոք, քան ինքը՝ Հովհաննես

Թումանյանն էր, մեր մեծագույն բանաստեղծը, վոր 1909 թվին գրված հոդվածում գանգատվում էր, վոր «Հայոց ամբողջ նոր գրականությունը հաղիվ թե մի քանի ամսվա ընթերցանության նյութ լինի. և սակայն քանի՞ հոգի կդառնա վոր ծանոթ լինեն իրենց մայրենի գրականությանը: Միշտ կտեսնեք բերան արած կրկնում են ես կամ են գրողի անունը, գովում, յերկկնք են հանում կամ պախարակում ցեխն են կոխում: Հետաքրքրվեցեք, հարց ու փորձ արեք, կտեսնեք, ծանոթ չի, կարդացել չի, ետեղից մի կտոր, ետեղից մի բրթուջ, հաճախ ծուռն ու սխալ: Յեվ վորքան տգիտություն, ինչ կույիտ ճաշակ...: Իսկ զծծիությունը... ամբողջ նոր գրականության

6387-57

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՕՍ. ԵԻԾՆՈՒԹՅՈՒՆ

արժեքը ի՞նչ է: Գի՞տեք: Անշուշտ
չգիտեք,— մի 100 ուերուց ել պա-
կաս: Ամբողջ գրականության արժե-
քը...: Յեւ ջանի մարդու տան կը-
ղտնեք ամբողջ ժողովուրդի մեջ...
(«Հորիզոն» 1909 թ. № 55): Ահա
հայ գրականության գրությունը
բուրժուազիայի տիրապետության
չըջանում նկարագրված այդ գրակա-
նության ամենամեծ վարպետի գըր-
չով: Դաշնակցության «պետականու-
թյան» չըջանում արդեն բոլորովին
ցամաքեց հայ գրականությունը: Լավ
հիշում եմ, վոր ամբողջ յերկու-յե-
րեք տարվա ընթացքում լույս տեսավ
միայն մի աննշան գրքուկ: Իսկ
Խորհրդային իշխանության՞ չըջա-
նում: Յեթե 1921 թ. լույս ե տեսել
6 գեղարվեստական գիրք, ընդամե-

նը 7 մամուլ, 6900 տիրաժով, ապա
1928 թ. ունենը լույս տեսած 51 ա-
նուն գիրք 194 մամուլ, 148500 տի-
րաժով. 1931 թվին լույս են տեսել
106 անուն գեղարվեստական գիրք,
526 մամուլ, 400·000 տիրաժով. վեր-
ջագետ այս տարի, 1934 թվին լույս
են տեսել և լույս են տեսնելու 220
անուն գիրք, 1657 մամուլ, 800·000
տիրաժով: (Բուռն ծափեր): Թվերն
իրենը պերճախոս են: Նրանք ցույց
են տալիս մեր գրականության լայն
ծավալը, նրա մասսայական բնույ-
թը, այստեղ կարևոր է չեղտել, վոր
վորպես ընդհանուր յերևույթ մեր
նույնիսկ մեծատիրաժ գրքերը լույս
տեսնելուց հետո սպառվում են մեկ
յերկու ամսվա ընթացքում, գիրքը
անհրաժեշտություն ե դառնում աշ-

Այս փաստերը բավական են բնորոշելու համար հայկական խորհրդային գրականության անընդհատ վերելքը, վորն առանձնապես՝ բուռն թափ է ընդունում վերջին տարիներում: Լենին-Ստալինյան ազգային քաղաքականության շնորհիվ մեզ մոտ, խորհրդային Հայաստանում ստեղծվում է ազգային ձեվով, ինտերնացիոնալ բովանդակությամբ գրականություն, վորը արդեն հզոր զենք է ժողովրդական լայն մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման և կոմունիստական դաստիարակության համար:

Գրականության զարգացման այսպիսի թափ և ծավալ հնարավոր եր միայն խորհրդային իշխանության պայմաններում:

Ավելի ցայտուն է դառնում մեր գրականության վերելքը դաշնակցական, եմիգրանտական, գոյություն չունենալու չափ աննշան «գրականության» ճահճացման և անկման ֆոնի վրա:



Սակայն, ընկերներ, սխալ կլինի՝ գերադնահատել մեր գրական Փրոնտի նվաճումները: Յեթե խորհրդային վողջ գրականության նկատմամբ իրավաբ. հարցն այնպես է դրվում, վոր նա դեռ ևս լիովին չի բավարարում սոցիալիստական եպոխայի բարձր պահանջները, վոր նա յետ և մնում մասսաների բառացի կերպով օրեցօր աճող պահանջներից, ապա նույն գնահատականը ավելի խիստ ձևով պետք է տանք նաև հայկական

Խորհրդային զբաղանությանը: Մեկ
գեռ չի բավարարում մեր գրողների
ստեղծագործական արտադրանքի աճ
ման վորակը: Մենք իրավունք ու-
նենք պահանջելու մեր գրողներից
չափ ավելին, վորովհետև նրանց պո-
տենցիալ հնարավորությունները ան-
համեմատ ավելի յեն: Յեվ իսկապես
միթե՞ փաստ չէ, վոր մեր զբաղա-
նությունը նույնիսկ իր թեմատիկա-
յով շատ հետ է մնացել մեր գործ-
նականից, մեր իրականությունից:
Մեր հեղափոխական պրակտիկան,
վոր լայն առումով հնի վերափոխու-
թյունն է և նորի ստեղծումը բոլոր
ասպարեկներում, տնտեսության, կուլ-
տուրայի, մարդկային հոգեբանու-
թյան բնագավառում, առայժմ թույլ
և մեծ մասամբ միայն արտաքին կող

մով է արտահայտվում մեր զբաղա-
նության մեջ: Յեթե վերջենք վեր-
ջիմ տարիմ, ապա մեր գրողներից
միայն Ալազանն էր, վոր փորձ արեց
(դժբախտաբար վոչ այնքան հաջող)
վեպի միջոցով վերարտադրել Հա-
յաստանի բանավորների պայքարը
պղնձի Փրոնտում: Ավելացրեք սրան
Ալիսելի մեկ-յերկու պատմվածքները,
Չարենցի, Չարյանի մի քանի բանաս-
տեղծությունները, Դեմիրջյանի պի-
եսը և կտեսնեք վոր սրանով գրեթե
սպառվում է մեր այսօրվա պայքա-
րին անմիջականորեն նվիրված ստեղ-
ծագործությունների ցանկը: Մինչ-
գեռ ինչքան լայն են մեր գրողների
հնարավորությունները: Ոգտագոր-
ծեցի՞ն արդյոք մեր գրողները թե-
կուղ այնպիսի խոշոր մի նախաձեռ-

նություն, վորսխիսին եր Գորկու ա-
ռաջարկը՝ «գործարանների պատմու-
թյան» մասին: Մեր վո՞ր գործարա-
նը կամ նորակառույցն է, վոր ար-
ժանացել է դրողների ուշադրությա-
նը՝ այդ տեսակետից: Ունե՞նք Ձո-
րադեսի պատմությունը, Լենինակա-
նի պատմությունը, Յերեվանի գոր-
ծարանների մասին, Յերեանի չինա-
րարության մասին վորեւե ամբողջա-
կան գործ: Ունե՞նք մի թեկուզ փոքր
ի շատե լուրջ գործ՝ նոր ավանների
մասին, ուր վերամշակվում է յերեկ-
վա «դաղթականը» և դառնում է խոր
հրդային Միության գիտակից քա-
ղաքացի: Դժվար թե ճարեք: Իսկ
խորհրդային դյո՞ւղը, վերջի՞ տա-
րիներում մեր դյո՞ւղում կառուրված
պատմական տեղաշարժերը ունեցե՞լ

են արդյոք մեր գրականության մեջ
արժանի արտացոլում: Կատարված
փորձերը, այն ել վոչ այնքան հա-
ջող, մատների վրա կարելի չէ հաշ-
վել: Անբավարար է այս, ընկերներ,
խիստ անբավարար: Թեմատիկայի
տեսակետից մեր գրականությունը
դեռ շատ հեռու չէ անհրաժեշտ
բարձրությունից: Բայց սրանով մի-
այն չի սահմանափակվում խնդիրը:

Առանձնապես սետք է նշել, վոր
մեր գրականության մեջ դեռ ար-
տահայտություն են գտնում խորթ
աղբեցություններ, դասակարգայնո-
րեն թշնամի աղբեցություններ: Մեր
գրողներից վոմանք այսօրվա մեր ի-
րականությունից կարծես թե փա-
խուստ են տալիս դեպի անցյալը:
Յերբեմն իդեալականացնում են անց

յալի ամենամուսուլ եջերը (Մահարի,
Թոթովենց), թախիծով և կարոտով
են վերարտադրում անցյալի եջերը և
որքեկտիվորեն նույնիսկ նսեմացնում
են մեր այսօրը (Բախուհ— «Ծիրա-
նի փողը»)։ Չափազանց հատկանշա-
կան է Չարենցի «Գիրք ճանապար-
հի»-ն։ Գեղեցիկ, հաջող, մնայուն
կտորների կողքին այստեղ կան ա-
ռանձին գործեր, վորտեղ արտա-
հայտված գաղափարները մերը չեն։
Սխալ է Չարենցի մոտեցումը դեպի
մեր անցյալը («Պատմութեան քառու-
ղիններով»)։ մեր ժողովրդի ամբողջ
անցյալի մեջ նա չի գտնում վոչ մի
լուսավոր կետ։ Նրա պոեմը վերած-
վում է մի նոր «վողբի» և վոր ա-
մենից դարձանալին է ու պախարա-
կելին՝ նրա «վողբը» տարածվում է

վոչ միայն մեր անցյալի, այլ վորոչ
չափով նաև մեր ներկայի վրա։ Այս-
տեղ արդեն այնքան լուրջ է Չարեն-
ցի կատարած սխալը,— ըստ եյու-
թյան նացիոնալիստական շեղում,—
վոր նա պետք է շատ լուրջ մտածի և
անհապաղ ուղղի այն։ Մենք չենք ա-
սում, թե չի կարելի գրել կամ
չպետք է գրել անցյալի մասին։ Վոչ։
Մենք պահանջում ենք անցյալի մա-
սին գրելիս դիտել այն կոմունիզմի
լուսարձակով, դիտել այն վորպես
շատակարգային պայքարի պատմու-
թյուն, այլապես դուրս է գալիս կամ
անցյալի լիբերական իդեալականա-
ցում կամ լալկան վողբ, կամ յեր-
կուսը միասին, այլապես դուրս է
գալիս պատմական իրողութեան ա-
ղավաղումը, իսկ պատմական իրողու-

թյունը աղալաղող գեղարվեստական ստեղծագործությունը, այդ շատ լավ հայտնի յե ձեզ գրողներինդ, անարժեք ե նաև գեղարվեստորեն:

Վերը բերված սխալները նացիոնալիստական բնույթը պարզ ե միանգամայն: Ահա թե ինչու մենք խըստապահանջ ու անխնա պետք ե քննադատենք այդ սխալները, յերեման հանելով նրանց սոցիալական — դասակարգային աստառը: Առավել ևս անհրաժեշտ ե խիստ և անհաշտ լինել, վորովհետև նացիոնալիստական սխալներն ու սայթաքումները հանդես են յեկել մեր գրականության յերկու խոչոր վարպետների մոտ (Չարենց և Բակունց), այն ել մեր մի շարք պարզորոշ նախադրուշացումներին հետո: Չե՞ վոր Ակսելը լույս

ընծայեց իր «Ծիրանի փողը» կուսակցության համագումարում մեր արած դիտողություններին հետո: Նշանակում ե այդ ընկերները դեռ չեն հասկացել կուսակցության հիմնական պահանջը՝ պայքարել անխնա նացիոնալիզմի ամեն մի արտահայտության դեմ գրականության մեջ, ամենից առաջ հայկական նացիոնալիզմի դեմ՝ վորպես ամենասուբ վտանգի: Նշանակում ե նրանք չեն հասկանում, վոր «կապիտալիզմի մնացորդները մարդկանց գիտակցության մեջ շատ ավելի կենսունակ են աղգային հարցի ասպարիզում, քան թե վորևե մեկ ուրիշ ասպարիզում: Նրանք ավելի կենսունակ են, վորովհետև հնարավորություն ունեն լավ դիմակավորվել աղգային կոստյու-

մով» (Ստալին)։ Ներկա համագումարը պետք է լավ հիշի այս հանգամանքը. ներկա համագումարը պետք է խստագույն քննադատության յենթարկի ամենից առաջ մեր գրողների ստեղծագործությունների նացիոնալիստական սխալները, քննադատի «անկախ անուններից և աստիճաններից», քննադատի սկզբունքներն, լենինյան ինտերնացիոնալիզմի գերբերից։ Մեր գրականության հիմնական խնդիրն է և մնում է՝ համակել մասսաներին պրոլետարական ինտերնացիոնալիզմով, վերացնել մասսաների գիտակցությունից նացիոնալիզմի հետքերն ու մնացորդները։

Չեմ խոսում մեր գրողների այլ կարգի սխալների՝ գոեհկարանություն, մակերեսայնություն, սխեմա-

տիզմի մասին։ «Ինչ ուզում ե լինի միայն «ակտուալ լինի», «բավական է յեթե կոլլոզի կամ հարվածային բանվորի կամ կոմյերիտուհու մասին ե— մնացածը— այսինքն վորակը— արդեն յերկրորդական նշանակություն ունի»։ Նման տեսակետներին դեռ մինչև հիմա յեւ տուրք են տալիս մեր մի շարք գրողները և տալիս են այնպիսի յերկեր, վորոնք արվեստի տեսակետից գրոշ չարժեն, չեն կարդացվում, մոռացվում են յույս տեսնելուց անմիջապես հետո։ Մեր պահանջն է՝ ուժեղ պայքարել նաև այս յերևույթների դեմ։ Որոհըրդային դրողը պարտավոր է խորանալ յերևույթների մեջ, իրական ջանք գործ դնել ճիշտ, լավ, պարզ, հստակ, բաղձալիզմանի արտահայ-

տելու մեր այնքան հարուստ, այն-
քան բարձրանդ իրականությունը:
Լայն ծավալելով ինքնաքննադատու-
թյունը, վորին ժամանակն է արդեն
վոր ավելի լուրջ վերաբերվեն մեր
զրոյները, ներկա համագումարը նոր
խթան պետք է հանդիսանա, ավելի
լայն ծավալելու համառ պայքարը
դասակարգային խորթ և թշնամի
աղդեցությունների դեմ՝ գրականու-
թյան մեջ, ավելի բարձրացնելու հա-
մար մեր գրականության գեղարվես-
տական վորակը:



Այսպիսով, ընկերներ, ձեր խնդիրն
է՝ չատ ավելի մեծ բարձրության
հասցնել մեր գրականության թե՛ գե-
ղարվեստական վորակը և՛ թե՛ գաղա-
փարական անթեքությունն ու հագեց-

վածությունը: Ի՞նչ է պետք կատա-
րելու համար այս պահանջը: Դրա հա-
մար անհրաժեշտ է ամենից առաջ,
վորպեսզի սոցիալիստական ուսուցիչ-
վոչ միայն ճանաչվի, այլ նաև գոր-
ծադրվի, վորպես գրական ստեղծա-
գործության հիմնական մեթոդ: Այդ
նշանակում է, վոր գրողը պարտավոր
է խորապես ճանաչել կյանքը և տալ
նրա ճշմարիտ պատկերը, այդ նշա-
նակում է, վոր զրոյը պետք է դիտի
կյանքն իր կոնկրետ արտահայտու-
թյամբ, հասկանա նրա հեղափոխա-
կան փոփոխման ընթացքը, նը-
րա զարգացման տենդենցը: Գը-
րական ստեղծագործության հա-
մար, մի անգամ ել այդ շեշտենք,
յեթե առաջնորդվենք սոցիալիստա-
կան ուսուցիչի մեթոդով, անսպառ

նյութ ե տալիս մեր իրականությունը: Վերցնենք միայն մի որինակ. Սեփանի ելեկտրոկայանների շինարարությունը. ինչքան բան ե փոխում այն մեր յերկրում, ի՞նչ հարուստ նյութ ե տալիս նա դրական ամեն մի ժանրի համար— ֆանտաստիկ ոտման, «ժամանակակից» վեպ, դրամա, պոեմ, ակնարկ, պատմվածք, մանկական դրվածք և այլն,— իր ամբողջ բազմակողմանիությամբ,— բընության տարերային ուժերի սանձահարումը, գյուղի և գյուղացիության վերափոխումը շինարարության մեջ, տեխնիկական ինտելիգենցիայի պրորլեմը, արդյունաբերական նոր ոջախների առաջացումը և այլն: Վորպեսզի սակայն հնարավոր լինի մեծարվեստ գործեր տալ թեմա ընարելով

մեր յերկրի մեծ վերափոխությունը, գրողն ինքը պետք ե ձուլված լինի սոցիալատական պրակտիկայի հետ, նա պիտի շնչի մեծ շինարարության, մեր կոլտնտեսությունների մթնոլորտով, նա կապված պիտի լինի նրանց հետ որդանապես, այլ վոչ թե մակերեսային մի այցելությամբ կամ «դործուղմամբ»: Այս տեսակետից չենք կարող գրվատել մեր գրողներին, հաղիվ թե ճարվի մի յերկու գրող, կարծեմ միայն ընկ. ընկ. Ալադանն ու Զարյանը, վորոնք, այն ել վոչ առանց վերապահումների,— փորձարին դեթ կարճ ժամանակով տեղում նստել և ուսումնասիրել իրենց գրբվածքների նյութը: Գրողները մեկմեկ դանդաղում են թե՛ «պայման-

ներ չկան»։ Ճիշտ չե, կուսակցութ-
յունը միշտ եւ ստեղծել ե յաւաքույն
պայմաններ գրողների համար։ Յալն
այն ե, վոր գրողներից վոմանը շատ
թիթե կերպով են նայում իրենց հա-
ւարակալան դերին ու պատասխանա-
սովությանը, չեն գիտակցում, վոր
գրողի ստեղծագործությունը պահան-
ջում ե շատ ավելի քրտնաջան աշխա-
տանք, քան վորեւե ալ ասպարիդում
աշխատողինը։ Կարծում են, թե մի
յերկու որում մի «ստեղծագործական
ալոցելությամբ», կարելի յե իրոք հա-
նաչել մեր գյուղի կամ ձււնարկու-
թյունների կյանքն իր ամբողջ բար-
դությամբ և բաղմակողմանիու-
թյամբ։ Պետք ե մտնել կյանքի խոր-
քը, վորպեսզի չլինեն դեպքեր, յերբ
գրողը գրում ե կոլտնտեսության կամ

գործարանի մասին, իսկ կոլտնտեսա-
կանն ու բանվորը նրա գրվածքում չեն
տեսնում իրենց։ Յերեկ Վաղարշա-
պատի ՄՏ Կայանի քաղբաժնի պետ
ընկ. Պետրոսյանը պատմում եր, թե
ինչպես Վաղարշապատի չըջանի գյու-
ղերում ժողովրդականացել են Շոլո-
խովի «Հերկած խոպանի» հերոսները։
Իսկ կարո՞ղ եք ցույց տալ մեր վորեւե
գրողի վորեւե հերոսին, վոր արդեն
ժողովրդականացած լիներ մեր կոլ-
տնտեսություններում և գյուղերում։
Ընդհանրապես գրողներին մեր կյան-
քին ավելի մոտեցնելու հարցը պետք
ե լինի համագումարի ամենալուրջ
մտահոգության առարկան։ Ավելի
մոտ գործարաններին, կոլտնտեսու-
թյուններին, խորհտնտեսություննե-
րին, բարձրագույն դպրոցներին, պիտ

ներիային, ավելի մոտ կարմիր բա-
նակին, ավելի մոտ կուսակցական և
կոմյերիտական կազմակերպություն-
ներին— դրանից դրողները, նրանց
ստեղծագործությունը, միայն շահել
կարող են: Ամենամեծ լրջությամբ
պետք է դրվի նաև գրողների ուսման
խնդիրը: Այստեղ նմանապես կաղում
են մեր գրողները: Առանց տիրապե-
տելու ժամանակակից կուլտուրայի
բարձունքներին, առանց լրջորեն ու-
սումնասիրելու և յուրացնելու Մարք-
սի, Ենգելսի, Լենինի, Ստալինի ուս-
մունքը, մեր գրողները չեն կարող ա-
ռաջ շարժվել ստեղծագործական վե-
րելքի ուղիներով: Լուրջ սխառեմատիկ
ուսումն— ահա ինչն է ներկայումս
մեր գրողների ամենակարևոր խնդիր-
ներից մեկը: Միայն այս պահանջները

կատարելու դեպքում գրողների շջա-
նում շարունակական կլինի բռնաբա-
ստեղծագործական մթնոլորտ, առաջ
կլան թարմ, կենսական հարցեր: Այս
պայմանով միայն կարելի չե արմա-
տապիս վերացնել այն մի շարք խիստ
բացասական յերևույթները, վոր նը-
կատվում են գրողների մեջ և արգե-
յակում ստեղծագործական աշխատան-
քը: Յևս նկատի ունեմ փոխադարձ
գժտությունները և խժժանքները,
խմբակային պայքարը, մանր-բուր-
ժուական բարքերը, հակակոլեկտի-
վիստական և հակա-հասարակական
տրամադրությունները, յեսասպաշ-
տությունը: Այս խայտառակ յերե-
վույթների դեմ պայքարի ուժեղացու-
մը ներկա համադումարի կարևորա-
յունն խնդիրն է: Մեզ հարկավոր է

ընկերներ, նոր տիպի գրող, վորն իր
ամբողջ եյուլթյամբ, կյանքի բոլոր
թեւերով կապւած ե մասսաների հետ,
սոցիալիստական պրակտիկայի հետ,
վոր զտնվում ե մեր ընդհանուր զար-
դայման մակարդակի վրա վոր ան-
րնդհատ սովորում ե, վոր անրնդհատ
առաջ ե շարժվում գրական ստեղծա-
ղործության վերելքի ուղիներով:

Բացառիկ ե քննադատության դերը
գրական ստեղծագործության վորա-
կի բարձրացման տեսակետից: Իսկ
քննադատությունը մեղ մոտ սաստիկ
հետ ե մնացել, ավելի հետ քան գրա-
կանությունը: Վորո՞նք են մեր քնն-
նադատության հիմնական թերու-
թյունները: Ամենից առաջ անբավա-
րար պայքարը, իր խորությամբ ան-

բավարար պայքարը թշնամի ու խորթ
ազդեցությունների դեմ գրական ըս-
տեղծագործության մեջ: Գրական
քննադատությունը պետք ե ա-
վելի խոր կերպով մերկաց-
նի նացիոնալիզմի ազդեցության ա-
կունքները, ցույց տա ամեն դեպքում,
թե ինչից ե բղխում այն, ոգնի գրող-
ներին, հաղթահարելու նացիոնալիզ-
մի ազդեցությունները, համակելու
վողջ գրականությունը ինտերնացիո-
նալիզմի վողով: Քննադատությունը
պետք ե լինի խիստ և հարվածող,
բայց չպիտի թուլլ տա մակերեսային
և անհանդուրժողական, «ձախ» վար-
քագիծ: Քննադատությունը պետք ե
լինի սկզբունքային և կոնկրետ... Հի-
կարելի անվերջ կրկնել արդեն բերա-
նի ծամոն դարձած ընդհանուր ճըշ-

մարտութիւններ, ինչպես նաև չի կարելի այս կամ այն գրողի գործերից յերեք-հինգ տող պոկելով փակցնել անմիջապես նրա ճակատին պատրաստի մակդիրը, ինչպես այդ փորձում էյին դեռ մինչեւ վերջերս անել մի քանի ընկերներ: Քննադատութիւնը չպետք է հրամայի և գեղերետալորինա պետք է կարողանա համոզել, նա միշտ պետք է հաշվի առնի գրական ստեղծագործութեան սպեցիֆիկումը, հետեւաբար մեր քննադատները պետք է ամենապատասխանատու վերաբերմունքն ունենան դեպի իրենց աշխատանքը: Յեթե սովորելու պահանջը մեր հիմնական պահանջն է գրական բանակին, ապա այդ պահանջը ամենից առաջ վերաբերում է մեր քննադատներին:

Գրականութեան վորակի կարեւորագույն ցուցանիշներից մեկը լեզուն է: Մեր գրական լեզուն հեղափոխութիւնից հետո անկասկած մեծապես հարստացել, ճոխացել է: Մեր գրողներին չատերը սակայն չեն տիրապետում դեռ մեր լեզվի ամբողջ հարստութեանը, չեն կատարում իրենց պարտականութիւնը լեզուն ավելի բարձր մակարդակի հասցնելու գործում: Նրանցից վոմանք նույնիսկ լավ չգիտեն լեզուն, կամ այնքան անփութ են և անխամ, վոր յետ են տանում այն: Լեզվի ասպարիզում ևս մենք պայքար պետք է մղենք յերկու ճակատով. ամենից առաջ՝ ռեակցիոն տենդենցների դեմ, վորոնք արտահայտում են հայկական նացիոնալիզմի

պատվերը, վորոնք հանգում են խիստ
գրաբարբանության, ամեն տեսակի
միջազգային տերմինոլոգիա դուրս
վանելու ձգտման, մեր լեզուն ըստ
հնարավորի ինքնապարփակելու և
խրթին ու մասսաներին անհասկանա-
լի դարձնելու ձգտմանը: Այս առնչու-
թյամբ հետաքրքիր և հիշել, թե ինչ-
պես եր դնում լեզվի հարցը հայկա-
կան նացիոնալիզմի ամենառեակցիոն
պարագուլոխներից մեկը՝ Ն. Աղլալ-
յանը դեռ 1914 թվին: Առարկելով
Հովհ. Թումանյանին, վոր լեզվի խնդ-
րում իր ժամանակին կանգնած եր
հիմնականում ուղիղ դիրքերի վրա,
«քննելով այն հարցը, թե գրաբարն
ե ավելի մոտ հայի հոգեբանությանը,
թե աշխարհաբառը, ճառախոսը (Ն.
Աղլալյանը) գալիս և այն յեզրակա-

ցության, վոր գրաբառն ավելի հարա-
դատ և քան աշխարհաբառը: Հոգեբա-
նական վոչ մի կապ չկա գրաբարի և
աշխարհաբարի մեջ, վորովհետև գը-
րաբարը ավելի շատ նման և հնդյեվ-
րոպական լեզուներին, իսկ աշխար-
հաբարը թուրքերենին: Այնպես վոր
յեթե հայ դրական լեզուն ուղղվում է
դեպի մեր նախահայրերի, դեպի հընդ-
յեվրոպական մտածողությունը, դրա
նով արդեն նա ձեռք է մեկնում հընդ-
յեվրոպական ժողովուրդներին: ... Ինչ
վերաբերում է հայ գրական լեզվի ճո-
խացմանը ճառախոսը դառնում է, վոր
հայ լեզվի ձևվերի և ուղղագրության
համար վորպես կշռաչափ պետք է ծա-
ռայեցնել գրաբարը»: («Հորիզոն»
1914 թ. № 88): Մի՞թե պարզ չե,
վոր լեզվի մաքրության խնդրում գը-

րաբարի նշանակութիւնը գերազնո-
հատողները որչեկտիվորեն ձեռք են
մեկնում Աղբալյանին, ճիշտ այնպես,
ինչպես Աղբալյանը դեռ 20 տարի ա-
ռաջ ավանսով իր ձեռքը մեկնում
էր... գերմանական Փաշխտներին՝
ներանց «արիականության» «տեսու-
թյանը»:

Պայքարելով լեզվի մաքրության
խնդրում նացիոնալիստական արտա-
հայտութիւնների դեմ, միաժամա-
նակ պետք է հարվածել մեծապետա-
կան շովինիզմը արտահայտող տեն-
դենցները, պետք է հարվածել այն
«ձախլիկներին», վորոնք չեն ցանկա-
նում ընդունել հայերենի (ազգային
լեզվի) դարգացման անհրաժեշտու-
թիւնը և որինաչափութիւնը, ճշգ-
րում են գործնականում խոչընդոտ-

ներ հարուցել հայերենի դարգացման
սռաջ, անգամ թարգմանութիւնների
մեջ թույլ չտալով հայերենում վա-
ղուց դործածական և ընդհանուրին
հասկանալի արտահայտութիւններ:
Որչեկտիվորեն այս կարգի շեղմանն է
նպաստում նաև գոեհկարանութիւնը,
լեզվի մեջ բարբառների տնքնադատ
ողտագործումը, լեզվի որենքների
վտանահարումը:

Մենք ստեղծում ենք և ստեղծելու
յենք այնպիսի հայերեն գրական լե-
զու, վորը 1) կարողանա լրիվ արտա
հայտել բոլոր այն հասկացողութիւն
ների գումարը, վորն անհրաժեշտ է
արտահայտելու համար մեր ժամանա
կակից սոցիալիստական հասարակու-
թյան բոլոր յերեվութիւնները, 2) վոր
լիովին հասկանալի լինի աշխատավո-

րական մասսաներին, մի լեզու, վոր հզոր զենք լինի մեր սոցիալիստական բովանդակությամբ ազգային կուլտուրան չտեսնված բարդավաճման հասցնելու համար: Այս գործում պատասխանատու դեր ունեն կատարելու մեր գրողները, վորոնք ավելի մեծ լրջությամբ պետք է հետևեն ամենից առաջ իրենց լեզվի մշակմանը և ճոխացմանը: Այստեղ պետք է խստորեն պայքարել նաև այսպես կոչված «ազգային հատկանիշների խտացման» ձգտումի դեմ, վորը գործնականում յերբեմն մասսաների համար անհանկանալիության աստիճանի բարդացնում է լեզուն, (որ. Զարենցի վերջին գրքի առանձին տեղերում), իսկ ըստ եյության գրականության լենինյան դիրքերից նացիոնալիստական չեղ-

ման արտահայտություններից մեկն է:

Առաջիկայում մեր գրականության զարգացման հիմնական խնդիրներից մեկն է անցյալի գրական ժառանգության քննադատական յուրացումն ու գեղարվեստական գրականության կըլասիկների հրատարակությունը: Վորոշ աշխատանք այս ուղղությամբ արդեն կատարված է, սակայն թվում է վոր Պետհրատը, Մարքսիզմի-Լենինիզմի Ինստիտուտը և մեր գրողներն ու քննադատները պետք է ավելի ակտիվ լինեն այս ասպարիզում: Այն փաստը, վոր Արովյանի արժեքավոր ման հարցն այդքան բուռն վիճարանություններ առաջ բերեց մեր գրականագետների շրջանում ինքնին վկա-

յում և, վոր այս ասպարիզում մենք
գեւ միայն առաջին քայլերն ենք ա-
նում: Գրական ժառանգության յու-
րացման և հրատարակման գործին
պետք է ձեռնարկել ամբողջ լրջու-
թյամբ, այստեղ վորեւ շտապագուկա
նություն վնասակար է և ազդում է
գործի վորակի վրա, ինչպես վոր ար-
դէն տեսնում ենք: Գլխաւորն այն է,
վոր միշտ, բոլոր գետքերում, վոր-
պես պարտադիր կանոն, այս խնդրին
ևս մոտենանք հայկական մտքի ու
լիզմի դեմ սլայքարն ու ժողովուրդ
տեսակետից, այլ խոսքով առած՝ յի
նելով մեր սոցիալիստական, ինտեր-
նացիոնալիստական կուլտուրայի դար
գացման շահերից:

Պետհրատր պետք է ուժեղացնի
կլասիկների հրատարակության գոր-

ծը: Յենթադրվում է շուտով լույս
ընծայել Թումանյանը, ավարտել Պա-
րոնյանն ու Նարդոսը: Այդ շատ քիչ
է, մեծ թերություն պետք է համա-
րել այն, վոր չկա մինչև այժմ Նալ-
բանդյանի նոր հրատարակությունը:
Նալբանդյանի ամբողջական գործի
ըննադատական հրատարակության
պատրաստումը Պետհրատի և Ինստի-
տուտի առաջնակարգ խնդիրներից մե-
կը պիտի համարել: Պետք է սկսել
նաև գյուղագիրների հրատարակու-
մը: Հանցանք է, վոր գյուղագիրնե-
րից չատերը, ժամանակին լուծյան
և անուշադրության մատնված բուր-
ժուական գրականության կողմից,
մինչև հիմա յի սովերի տակ են մնա-
ցել և մոռացության մատնվել: Գյու-
ղագիրներից վոմանք մեզ շատ ամիւր

մոտ են, քան կարծում են շատերը: Վերջապես, հատուկ տեղ պետք է ունենա նաև ժողովրդական բանահյուսության հավաքումը, մշակումը և հրատարակումը: Այս ուղղությամբ մինչև այժմ կատարած աշխատանքները նմանապես խիստ անբավարար են:



Մեր գրականության զարգացման, ինչպես նաև գրականության միջոցով մեր ինտերնացիոնալ կապերն ավելի ամրացնելու տեսակետից բացառիկ կարևոր նշանակություն ունեն թարգմանությունները. յես նկատի ունեմ ինչպես ժամանակակից խորհ. գրողների, նմանապես և՛ ուսուսական և՛ համաշխարհային կլասիկների հայերեն հրատարակման գործը: Հայտնի յեն Պետհրատի ձեռնարկումները և ծրա-

գրերն այս ուղղությամբ: Չի կարելի չնշել, վոր այս տարի լույս են տեսնելու ամբողջական «Դոն Գիշտը», Տոլստոյի «Պատերազմ և խաղաղությունը», Հայնեյի գործերը, Ֆերգուսոն, ինչպես նաև բավական աչքի ընկնող բան ժամանակակից գրողներից: Այս բոլորն իր կարգին խոշոր չափով բարձրացնում է մեր գրականությունը, մեր մասսաների կուլտուրական ընդհանուր մակարդակը: Առաջիկա տարիներում այս աշխատանքն ավելի հուժկու թափով պիտի ծավալվի: Մանավանդ ավելի ուշադիր պետք է լինել մեր հարևան ժողովուրդների, Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային գրականության լավագույն գործերի թարգմանության և հրատարակման գործին: Այստեղ չպետք է միայն

մոռանալ, վոր բարձր վորակն ամենից
կարևորն է, մանավանդ կլասիկները
թարգմանության գործում: Պատաս-
խանալու դեր ունի կատարելու այս
գործում մեր գրողների կոլեկտիվը:
Գեղարվեստական գործերի, մանա-
վանդ կլասիկների թարգմանությունը
գեղարվեստական ստեղծագործու-
թյունն է և բարդ ստեղծագործու-
թյուն. մինչդեռ մեզ մոտ չառ անգամ
թարգմանության վրա նայում են
վորպես յերկրորդական մի գործի,
վորով կարելի չէ գրադվել ի միջի այ-
լոց: Դրա հետևանքով արդեն լույս
տեսած մի շարք թարգմանություննե-
րի վորակը չափազանց անբավարար
է: Մեր գրողները պարտավոր են տալ
հայ ընթերցողներին կլասիկների ու
խորհրդային ժամանակակից գրակա-
նության լավագույն գործերի բարձ-

րորակ թարգմանություններ:

Ընկերներ, յես աշխատեցի հա-
մադուժարի ուշադրությունը կենտ-
րոնացնել մեր գրականության այս-
մեական հանգուցային մի քանի խն-
դիրների վրա: Ինքնաքննադատու-
թյան նշանաբանի տակ ներկա հա-
մադուժարը պիտի ամփոփի մեր գրա-
կանության մինչայժմյան նվաճում-
ները, պիտի վեր հանի թերություն-
ները և հետ մնալը: Համադուժարը
պիտի միջոցներ մշակի վերջնականա-
պես վերացնելու բոլոր այն արդելակ-
ները, վորոնք դեռ մինչև վերջերս է:
Ղժվարացնում եյին Համկոմկոմի
(Բ) Կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի
պատմական վորոշումների անչեղ կի-
րառումը: Համադուժարը պիտի տ-
պահովի մեր գրականության վերելքն

այն ուղիներով՝ վոր ցույց ե տվել խորհրդային գրականութեանը մեր մեծ ուսուցիչ ընկ. Ստալինը: Շուտով բացվում ե Մոսկվայում խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարը: Արդեն պարզ յերևում ե այդ համագումարի իրոք համաշխարհային նշանակութիւնը: Յեւ մեր լավագույն գրողների ու գրականագետների մասնակցութիւնը պատմական այդ համագումարին նոր, հզոր ազդակ պիտի հանդիսանա մեր գրականութեան ինտերնացիոնալիստական կապերի ամրացման, նոր յեւրակետ պիտի հանդիսանա մեր գրականութեան նորանոր նվաճումների և հաղթանակների համար:

Զրադվելով գրական խնդիրներով, չենք կարող, ընկերներ, այս համագումարում, վորն իդեպ, զուգադիպում ե

համաշխարհային իմպերիալիստական պատերազմի 20-ամյա տարեդարձին, մի ակնարկ չնետել ներկա միջազգային դրութեան վրա: Անցավ 20 տարին մարդկութեան պատմութեան մեջ իմպերիալիզմի սարքած ամենասարսափելի սպանդից հետո: Իմպերիալիստական պատերազմի ժամանակ և նրանից հետո բուրժուազիան և նրա ամեն տիպի ու գույնի գործակալները խարում եյին մասսաներին՝ թե այս պատերազմը վերջին պատերազմն է լինելու: Վո՞ր կույրը սակայն այսօր չի տեսնում, վոր իմպերիալիստական աշխարհն այսօր նույնքան մոտ ե նոր և ավելի ահեղ պատերազմների, վորքան 1914 թ. նախորդակին: Վո՞ր կույրը չի տեսնում, վոր, յեթե մինչև այսօր չի ծագել նոր պատերազմը, յեթե

միջազգային խմբերիալիզմի ավան-
տյուրիստական վոհմակները դեռ չեն
նետվել մեր կարմիր սահմանների վրա,
ապա այդ միայն այն պատճառով,
վոր մեր թշնամիները տեսնում ու
զգում են մեր հերոսական, մեր ան-
պարտելի կարմիր բանակի որեց-որ
աճող հզորութունը, մեր աշխատա-
վոր ժողովուրդների կազմակերպվա-
ծութունը և անպարտելի կամքը՝ ապ-
կործանիչ հակահարված բոլոր նը-
րանց, ովքեր փորձ կանեն հարձակ-
վել մեր յերկրի վրա, «վորպեսզի
այսուհետև նրանց համար հրապուրիչ
չլինի իրենց խողի դուռը կոխել մեր
խորհրդային բանջարանոցը»:

Ընկերներ, դասակարգային պայ-
քարր բուրժուական աշխարհում յեր-
րեք այն աստիճան սրության չի հա-

սել, ինչպես ներկայումս: Գերմա-
նիայի և այլ յերկրների Ֆաշիստա-
կան խժոժութունները, բանվորա-
կան մասսաների, աշխատավոր ժողո-
վրդի չտեսնված հարստահարումն
ու կեղեքումը, արյան քաղանիքները,
վոր սարքում և խեղակորույս բուր-
ժուադիան աշխարհի բոլոր յերկրնե-
րում, այս բոլորը մահապարտված
կապիտալիստական աշխարհի որհա-
սի ջղաձղութուններն են: Յեւ, ինչ-
քան ավելի տարածվում և խախտը,
քայքայումը, վայրենացումը կար-
միր դժից դուրս, բուրժուական աշ-
խարհում, այնքան ավելի վառ վայ-
րում են մեր յերկրում, համայն աշ-
խատավորների հայրենիքում՝ նոր
կյանքի, յերջանիկ կյանքի լույսերը:
Մեր յերկիրը՝ մարդկության առա-



ջամարտիկն ե. նրա հաղթանակն ա-
պահովված ե, վորովհետեւ նա հաւա-
տարիմ ե մնում Լենինյան մեծ ա-
վանդներին, վորովհետեւ նրա նաւի
դեկի մոտ անասան կանգնած ե մեծ
դեկավարը (բուռն, յերկարատե ծա-
փեր) : Անշեղ կատարելով ընկ. Ստա-
լինի խմաստուն ցուցումները՝ աշխա-
տանքի և պայքարի բոլոր բնադա-
վաններում, ավելի ուժեղացնելով
պայքարը մեր դասակարգային թշնա-
միների ու նրանց դադափարախոսու-
թյան դեմ, նացիոնալիզմի և ամենից
առաջ հայկական նացիոնալիզմի դեմ,
Խորհրդային Հայաստանը և նրա դը-
րականութիւնն առաջ կերթան դեպի
նորանոր հաղթանակներ (բուռն ծա-
փեր) :

ՀՀ Ազգային գրադարան



NL0375685

63.877

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

Ա. ХАНДЖЯН

Задачи

Нашей литературы

Госиздат ССР Армении, Эривань, 1934